

ԳՐԱԿԱՆ

ՄԻ ԱՅԼ՝ ՄԻ ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀ...

(Սեւակ Յովհաննիսեանի պոեզիան)

Պոեզիայի եւ իմաստասիրութեան ելման խորքում առկայ է ստեղծողի անձնական կենսափորձի ու ֆննախոյզ դիտարկումների անանձնականացումը, ուսումնառուած, այնուհետեւ՝ գեղարուեստական այլասացութեամբ արտայայտուած. մի իրարոյն համադրութիւն, որ իր տրոհուած լինելութեամբ ձգտում է անվախեանութեան փառք հասցնել իր լրումին, խօսում համընդգրկել Ամբողջը՝ Երկիրը եւ Երկինքը...

Իմացարանական այս մետատեքստում պոեզիան «առաջնային» արժէքարանական գործառոյթ է կրում, որից մասնատում է եւ դէպի որին վերադառնում է իմաստասիրութիւնը (Շելլինգ):¹ Գրողը նակատագիր կրող անհատ է, որ իր արարումի յաւերժ ներկայութեան մէջ առաջնորդում է մեզ դէպի գոյութիւն ունեցող Միակ աշխարհ՝ ներհուն, ինքնագոյափոխաբերող աշխարհ՝ արթուններին, Լոյսի, Յաւերժի ջղաճիգ-լուծարող, տրասցենդենտի (անդրանցականի) իր ինքնութիւնը ստոյգ գոյաւորող՝ մի Այլ՝ Մի Երրորդ Աշխարհ...:

Բանաստեղծը միայնակ է տիեզերական այդ լուսեան անսահմանութեան դէմ...: Իր մէջ, իրենով արտածում է Յաւերժական կեանքը՝ յայտնուած Երկնքի եւ Երկրի հատման կետում (իրականի եւ իդէականի): Նա «հաղորդակցում է ինքնուրուակ աշխարհին», որից ծնում է Քախիժը՝ գոյի-անգոյի փոխակերպումներում: Նրան տրուած է ընթանալ յայտնիի եւ անյայտի այդ մթազծումներով դէպի միակ աշխարհ, որ իր մէջ է, միաժամանակ դուրս է իրենից...: Նա սոսկական հայեցող չէ, որ ընկղմում է «ներսում»՝ մոռանալով եւ կորցնելով Ուղին: Եթէ հոգու մէջ «ընդերկրեայ գետեր են հոսում», նեղում ժայռեր, ապա կարելի է իմաստարանել այս դէպքում՝ ոչ թէ ներհայող քանաստեղծի աշխարհի, այլ դէպի Աշխարհ տանող «քանաստեղծի աշխարհի» մասին...:

Մարդու քննազանցական իմացութեան «նման առաքելութիւնը» լուսեան պատեանը՝ նեղելու, Լոյսի մէջ յայտնուելու, կեանքը հնարաւոր լրիութեամբ ընդգրկելու շնորհը նախախնամութեամբ տրուած է գրողին: Լոյսը յենակետ է, մի արահետ, որ տանում է քանաստեղծի հոգեւոր-արարչական տարածութիւնը, դէպի Ինքը, որից բխում է անհատի դրաման՝ յայտնագործման, յայտնատեւման իր տրոհման դրաման...:

Փիլիսոփայորէն այն արտածում է այսպէս՝ «Տուէ՛ք ինձ Կէտ մի որոշ՝ եւ Ողջը շուտ կը տամ ես» աշխարհընկալումով: Անհատը այս «քեւեռում» զգայում, գիտակցում է իր «կան», եւր: Այնուհետեւ մասնատուելով իրերի մէջ, որոնելով իր էութիւնը, դիմառնում է մահին, որից այնկողմ Ոչինչն է՝ անվախեան, անսկիզբ, այլեւ յաւերժ անկանգ: Բանաստեղծն այս պարագծում փոխակերպում է էութեան, տրոհում գոյութեան նանաչողութեան կենսալորտում, ուստի «ակնթարթն է լոկ Աստուածն» իր անվերջ (կամ՝ «ապրած մի կեանք է իմ օրը ամէն»), ինքն էլ՝ «ակնթարթի» անանցական գոյութիւնը...:

II

Սեւակ Յովհաննիսեանի պոեզիան էութեան լուսարձակումն է, առինքնող, այնպէս՝ ասես երազը շարունակուի արթմին...: Նա իր փանամեայ ստեղծագործական շրջանը անցել է Լուսեան խեցու մէջ պատենաւորուած՝ ինքնաստոյգ, Բառի հրաշքին ապաիւնած, ֆանի դեռ աղմկում էին հրապարակներում քանաստեղծիկների մի խորձ քազմութիւն: Հրապարակուած երկու լղարիկ

¹ Эстетика: Словарь (под общей ред. А. А. Беляева и др.), М. 1989, ст. 399.

բանաստեղծական ժողովածուները՝ «Մակընթաց լոյս»(1986), «Զփակուող շրջան»(1990), գրաֆնութեան մկրատումներով, վկայում էին երիտասարդ բանաստեղծի օժտուածութեան մասին, բայց թերեւս «էիչ էին»՝ քացայայտելու այն հոգեւոր համակարգը, որը գրականագիտութեանը պարտադրում է իր ինքնաբան «հմայախօսութիւններից» հեռանալ՝ մերձենալու, ընկղմուելու Յովհաննիսեանի «հոգեւոր անդունդը»...: Իւրատեսակ այս «ինքնավերադարձը» պայմանաւորուած է տեսական նոր ընկալումներով, որով պիտի ընթանալ՝ վերաբժե՛վաւորելու ինչպէս այս բանաստեղծի, այնպէս էլ 90-ականների հայ պոեզիան:

Սեւակ Յովհաննիսեանը դարաշրջանի վերջին տասնամեակի՝ իր լրումին հասած, դեռեւս երիտասարդ, բայց իր քառաշխարհը ստեղծած բանաստեղծն է, որն իր տեսահայեացքը քեւեռել է մի անվախճանութեան կէտի, որից անդրադարձներ է ստանում եւ դէպի ուր ընթանում է Մարդը՝ իր գոյի առեղծուածները, իր ինքնութեան չտրորուած, չլուսաբանուած արահետները պեղելու...: Սա բանաստեղծի իւրուրոյն ճանապարհ է, որ աւանդների «ներկրման» իմաստով ինչքան մաքուր է, այնքան էլ հարուստ փոխտացումովների՝ նրանց մէջ տրոհուելու, իր ինքնութիւնը մակարեքելու նորովի Հայեացքով: Հետեւաբար Յովհաննիսեանը իր աշխարհայեցութեամբ որքան նոր է, նոյնքան հին, իմաստաբանուած, որովհետեւ Հշմարտութեան կրողն է:

Կեանքն ինքն է իր «փիլիսոփայութիւնը», այն ենթարկում է ինքն իրեն, ուստի չի կարելի ասել, որ այն ունի սկիզբ եւ վերջ («քանի որ այն ոչ ոք չի տեսել»), այլ «...նա միայն կայ, ընթանում է՝ որպէս շարժում եւ շարժման ինքնագիտակցութիւն»: Այդ դէպքում՝ կեղծ է գիտելիքը («նա ընդամենը նկարագրում է առարկան»), այն «իսկական նախապաշարմունք է»: Իրականում նիւթը, աշխարհը բանաստեղծի «իւրարտայայտութիւնն է՝ » «ինքնամփոփ», ինքնարտածական, գիտակցութեան զգայական մի «առարկայութիւն», ուստի նրա *ռացիոնալ* (rational) կամ դրապաշտական ճանաչումը կեղծ է ըստ քննազանցական ճանաչողական կարգի:

Յովհաննիսեանի *իրացիոնալ* (irrational) ճանաչողութիւնը մերձաւոր-արիւնակցական կապ ունի, աւելի ճիշտ՝ փոխտացումովային առընչութիւն ունի Շպէնգլերի, այնուհետեւ՝ Շոպենհաուերի, որոշ տարրեր՝ բանաստեղծութեան վերլուծական համակարգում, աւելի վաղ՝ Պլատոնի, Յիստի, *էկզիստենցիալ* (existential) ճանաչողութեան (մահուան եւ *աքսուրդի/absurd/* զգայական քեւ-նուածութեամբ) եւ այլն...:

Ս. Յովհաննիսեանը հայ պոեզիան «մտակարգում է» ասես իբրեւ «բանաստեղծելու փիլիսոփայութիւն», որն իր քառապատկերի անպարագիծ ակունքներով փոխարարեւում է միջնադարի տաղերգուներին, նրանցից ամենամեծի՝ Նարեկացու երկնային մերձեցումներին (ինչպէս ինքն էլ «հազորդակցում է Նարեկի լոյսին»): Նա էլ, ինչպէս մեծ Նախորդը, Մարդու ինքնափնտրութիւնը՝ համայն «ես»-ը սկսելով ներսից՝ առաջադրում է մարդու եւ ինքնին իրի, երկնի եւ գետնի յարաբերութեան խնդիրը: Բայց նախ եւ առաջ՝ դրանք «մասնատելով» իրարից, կամ որ նոյնն է՝ ընթանալով դրանց «հակադրեւամիասնութեան» միջով (*իրացիոնալ* աշխարհում դրանք նոյն հասկացողութեան կրողներն են՝ կեանքը - ինքը՝ իբրեւ գոյութիւն), անհատի կեանքի ողորդապատումն իրացնելով արիստոտելեան *կարարտիկայի*՝ քառապատկերների «նիւթական» հոլովոյթների ծիրում...: Ահա թէ ինչու քառերը ձգտում են իրենց «նախնական» իմաստին: Նրանց խորքում բախնում է վիթխարի *ինֆորմացիա*: «Նախնական» իմաստին: Նրանց խորքում բախնում է «իր մէջ», այլ ինքն թուում է՝ Ս. Յովհաննիսեանը քառը ոչ թէ պարփակում է «իր մէջ», այլ ինքն էլ, ընթանալով դէպի քառը, ճանաչում է իրեն, եզակին, Մի-ն: Ուստի՝ քառ-

¹ Ս. Յովհաննիսեան, Գիտութիւն եւ ճշմարտութիւն, «Աստղիկ», հ. 4, 1991թ., էջ 220-221:

պատկերը, այնուհետև լրիութեամբ՝ բանաստեղծութեան ծնունդը աղօթարարելով իբրև մի Ակնթարթի դրամա, *կոնտեքստում* (context) այն մնում է «անաւարտ»:

Իմաստը սակայն մէկն է՝ հասնել Ամբողջին, որի տեսապատկերում ինքնին իրը *տրասցենդենտ* հասկացութիւն չէ, այլ՝ տրամաբանութեանը, մտքին հասու տեսանկար՝ իր շարժման մէջ: Հետեւաբար, նրա ընկալումը բացառելով իբրև *սիմվոլի* (symbol) նշանութիւն, մտակարգման իմաստով բանաստեղծութիւնն ամբողջութեամբ (բառ-պատկերը եւս) վերանում է Յաւերժութեան փոխաբերութեան (*մէտաֆորի*): Անհատն այդ գոյարանական կենսոյորտում համայն եսի էութիւնն է անտարանջատ, որի գաղտնիքը, ինչպէս բառերի՝ անձիր են՝

Ինչպէ՞ս կարող են բառերը չնչին
Պարփակել զարհուր Անյայտը հոգու.
Ես, որ մի մարդ եմ՝ առաջին-վերջին,
Բացում եմ ահա՛ ինչ կայ իմ խորքում:

(Մուտֆ)

Իհարկէ, այս եզակի՝ նշանութիւնը գոյի իմաստի փոխածելութիւնն ու անտրոնի միասնութիւնն է պարունակում, որով ընթանում է գուգադիր Մարդը՝ այստեղից բնութեան շջմարտութեան կեանքը եւ կեանքի շջմարտութիւնը...:

III

Սեւակ Յովհաննիսեանի պարագայում որքան կարելու են նրա պոզիտիվ փիլիսոփայական ակունքների նախադրումը, նշանակում է «նմանութիւնների տարբերակումը», որով երեւանում է Բանաստեղծի Ուղիւն...:

Պէսիմիստական (pessimistic) աշխարհայեցութիւնը բանաստեղծի հոգեաշխարհում ինքնարտայայտման էանիշների սկզբնաւորումներ են, որ անդրադարձում է անհատի ապրումների, ինքնատրոնումների, ողբերգակեցութեան, երկութեան պոստկոմների՝ դէպի Լոյս-Աստուած ընթացող ջղածգումների միջով:

Սա անարար-անաւարտ կեցութեան ուրուագծում է, որ ապրում է մարդը-ինքը՝ տիեզերական գոյը: Շարժման մէջ՝ նրա իսկ միջոցով, տեղակայուող Հայեցողականը սակայն, այդ շարժման առկախման շնորհիւ էլ ապահատատուում է (այստեղից էլ անհատի տեղիքի անբաւարարութիւնը, երկութեան ջղածիգ պրկումները, իդէաների կորստարադձ հետամերձութիւնը):

Եթէ Նարեկացու ողբերգական անհատը նախադրում է ձգտում է դէպի Մին-կատարեալը-Աստուծոն, ապա դեռեւ Յովհաննիսեանի «մոլորուած» անհատը «դատապարտուած է» նախաչելու, այնուհետև նոր՝ հոգեմեծանալու կեանքի շջմարտութեանը՝ Աստուծոն: Բնականաբար՝ «հարթութիւնների» այս տարբերութիւնը Նարեկացին ընկալում է խօսքի վերասլաց վերացարկումներով, Յովհաննիսեանը՝ նկարագրական-տեսապատկերային ընդհանրացումներով, բայց եւս՝ «ի խորոց սրտի»...:

Անստացական այս մետատեքստը Յովհաննիսեանի պոզիտիվում ժառանգական-օրգանական կառուցուածք ունի, որի էպիկական ուրուագիծը արդէն նախարմատներ է ձգում «Մակընթաց լոյսում»: «Շուվը» եւ «Երկիրը» ինչպէս երկրաբան՝ կեանքի էներգիան կրող տարածութիւն են, այնպէս էլ էութեան նիշեր, որոնց մէջ տարալուծուում է կեանքի գաղտնիքը, Լուսիւնը, Պատրանքը, Յուշը, Մահը...:

Իբրբը, Մարդը «Մակընթաց լոյսի» մէջ են, քանի դեռ անյայտի բողոքն է պատուած: Լուսեան քեռներում սակայն ապրում ու շարժում է կեանքը՝ իբրև ինքն իր պատեառ, ինքն իր հետեւանք, իսկ մարդը՝ նոյն ինքը՝ իբրև

կենսաբանական գոյ, հայում է ներս՝ երեւանուելով իրրե «փշրուած հայելի», բնութիւնը-կենդանական աշխարհը՝ նոյնպէս...: Ապրելու գոյութիւնն ինքնին դրամա է՝ կենսատարածքի յարափոփոխ, պատրանքագերծ այդ շրջապտոյտում, որ Մարդն անուանումներով գաղափարագրում է իրրե Երկիր, Մով...:

Սեւակ Յովհաննիսեանի *պեսիմիզմը* (pessimism) նոյնքան խորունկ մի *ռեակցիա* (reaction) է աղաւաղուած մի իրականութեան դէմ, ինչպիսին դարավերջի հասարակական կեղծապատիր այն քաղաքակրթութիւնն է, որի «Փշրուած հայելում» դասալիքի է վերածուել մարդը, մահացել հայրենիք, անհատ, լեզու, պետութիւն...:

Շպէնգլերը նմանօրինակ «իրավիական» փորձում է մեկնարանել «ներսից»։ «*Ինտելեկտուալ* (intellectual) գեղարուեստագէտը» (Թ. Մաննի արտայայտութիւնն է) կեանքի իմացաբանութեան ակտը դիտելով իրրե կենսաբանական եւ գեղագիտական զգայութիւն, այնուհետեւ փոխաբերում էր (մակարբերում) իրրե հոգու «նախնական վերապում»։ Նրա կարծիքով վերապումն յատկութիւնը կրում է նախակերպարը («*նախասիմվոլը*», «*նախաֆէնոմէնը*») - մարմնում հասունացող «ցորէնհատիկը»։ Անհատը, սակայն, այս պարագայութեան մէջ *կոնկրէտ* պատմականօրէն ձեւաւորուած մշակոյթի կրողն է։ Մերժելով «համամարդկային մշակոյթի» աւանդական ըմբռնումը, գեղագէտը բաժանարար սահմաններ էր գծում «անկախ» մշակոյթների միջեւ։ «Իր» մշակոյթը միակ հնարաւորութիւնն է ընձեռում, ըստ Շպէնգլերի, վերապրել կեանքը (նանայել)։ Իսկ ընկալել օտարը՝ հնարաւոր է քացառիկ, լոկ *«կոնգրէնեալ»* փիլիսոփայագեղագիտական *իմտուիցիայի* եւ «վերավերապումն» միջոցով։

Ամէն մի մշակոյթի դարաշրջան բնութագրում է հասունացման երկու փուլով՝ ծագող (восходящую) (նեղ իմաստով) եւ քաղաքակրթութեան վերափոխուող՝ անկում ապրող (нисходящую)։ Առաջին փուլին յատուկ է օրգանականութիւնը, արուեստների ծաղկումը, երկրորդում՝ տեխնիկայի աճը, մէգապոլիսների առաջացումը, մշակոյթի տեխնիկական (նիւթական) յագեցուածութիւնը, տարածաշրջանային պատերազմները եւ «*ցէզարիզմի*» (կայսերականութեան) յարձակումները...¹։

Ս. Յովհաննիսեանը «*էվոլուցիայի*» (evolution) անապատան այս դրամայում նակատագրօրէն դատապարտուած անհատի կեցութիւնն է կրում.

Երկինքն իջնում է, իջնում անընդհատ...
Երկիրն էլ ասեւ քարձրանում է վեր...
Արանքում նրանց մթին ու անյայտ,
Թափառում ենք մենք որպէս կոյր ստուեր:

Խփում է Երկիրն Երկիրը յանկարծ.
Եւ շեղքի նման՝ բոցաձեւ, հատու,
Թոչում է յանկարծ սրընթաց մի Հարց.
Եւ մի հարուածով մեզ յար գլխատում:

(«Ճակատագիր»)

Պահի *սնոբիստական* (snobbish) ինքնիմացութիւնը տրուած է վերուստ, ուստի գրողը թափառում է իր «մարմնի» մէջ, արտաժամանակեայ փոխաձեւութեան գաղտնիքները ճնշում են նրան, ուստի «մարմինն ինքն իրեն հանգելու», իր էութեան նիշերը անտրոն «դիտելու-նանայելու» մի ելք ունի՝ նախիմաստ իր կերպը Խօսքի փոխարկելու, ինչպէս «Հեֆիաթը», «Յուշը», «Մահը», «Քաղաքը»

¹ Эстетика: Словарь (под общей ред. А. А. Беляева и др.), М. 1989, ст. 403 - 404.

Եւ այլ քանաստեղծութիւններում, ուր նոյն քառիմաստի հնչիւնը «մարմնանում», կրկին ասես փոխաքերում է խօսքի...:

Մարդու մարմինն ինքնօրէն տրուած յատկութիւն է՝ ապահաստատ, անելի եւ նոյն ինքնութիւնն է կրում, ինչպէս ծովը՝ որ գաղտնիքներ ունի («Ծովը»), նոյն անուրջները՝ «քեկուն, ինչպէս Ծովին ընկած հառագայթ» («Պատրանք»), հուրհեք Զրահարսին ունենալու-տիրելու երազը («Երազ», «Հեքիաթը»), ժամանակի աւազների մէջ ցամաքում է իրրել մի լուռ արցունք, քամիների հառաչանքն է կրում, իր պատեանի խորքում խիտունջի նման թափնում է լոխն՝ «անցեալի ու վերադարձի» մէջ պահպանելով իր գոյութեան թախծալուր յուշը («Յուշը»):

Յովհաննիսեանի «նախակերպարը» սակայն մի էկզիստենցիալ էութիւն է, որ պահը վերապրում է իրրել երգ (խօսքի պատկեր) («Երգը»), նրա անհաստատ գոյութիւնը վերահում է իրականութեան, որի պատկերը փոխակերպում է Միտք-Քաղաք հասկացութեան (Շպէնգելի ասած՝ մշակոյթի երկրորդ աստիճանը) («Քաղաքը»):

Տարածութիւն-երկիրն այս տագնապի, տենչերի, կարօտի մի հրեղէն «սիւն է», որից սկսում է տառապանքի ջղածիք ինքնորոնումը: Բայց...

Նա ցածում թողած յեղձուկը կեանքի՝
Շողարձակում է մաքուր Երկնքում...
Եւ աստ լինած մի մեղսական հոգի
Տանջուած իր դէմքն է լուռ խաչակնքում:

Մարդն այդ վիթխարահսկայ լկումի մէջ նման է մի մանկան («Նախաֆէնումէ-Ար»), որ իր փոքրիկ դոյլի մէջ աւագ է լցնում ու դատարկում («Միզիփոս»), չիմանալով, որ իր նախորդը՝ Կայէնը, լքել է իր քարը ու ձեռքը պարզել Մահին...: Նա (քանաստեղծը-մարդը եւս)՝ տեսել է Մահը եւ Երջանիկ է, քանզի նանաչել է այն, ազատագրուել մարմնի ցանկաքեր թոյնից՝ կարօտներից, իղձերից:

Լուրթեան այդ պատեանի մէջ (երկիր) Յովհաննիսեանին քաղաքակրթութեան այլ ֆէնումէններ են հալածում նաեւ՝ ոգու սովը, հայրենիքի «անյարթանակ յարթութիւնների» տառապանքն է գումարում կրկին, եւ նախակերպարը վերապրում է իր խոռովի ամենատանջալի ցնցումը.

Արդեօք ու՞ր է, Մհեր, արդեօք ու՞ր է քո հին
Անքեկանելի սուրը՝ կայծակնաշող, հրէ.
Ու՞ր է, ու՞ր է արդեօք եւ հրեղէն քո Ձիւն.
Եւ սլացքը ոգու քո աներեր...
Քեզ խաքեցին, Մհեր, քստմանելի ու քիրտ.
Գուրգուրեցին, Լոյսով պատեցին քեզ...
Ընծայեցիր նրանց ոգին քո հուր, հրկէզ.
Եւ չիմացար յաւերժ, թէ արդեօք ո՞վ եւ ե՞րբ
Քո ցատումի արդար սուրը առեւանգեց...:

(«Մհեր»)

Ինքնաբերական «փշրուած հայելում» դրաման վերանում է «ողբերգութեան մատեանի»...: Անհատն իր գոյութեան յենակետերն է որոնում («աշխարհը շրջելու»), իր իմացութեան ստուերից վերափոխուելով-յարանելով անվերջ շրջապտոյտի...:

IV

Ս. Յովհաննիսեանի պոեզիայի «Ժամանակագրական» վերլուծութիւնը սուկ պայմանադրական նշանակութիւն ունի: Իրականում այն չի բնութագրում գրողին, եթէ նկատի առնենք ստեղծագործութեան վերջում նշագրուող թուագրութիւնները:

Սկսած «Զփակուող շրջանից»՝ Յովհաննիսեանի ստեղծագործութեան մէջ մտազգացական համակարգը ինքն իրեն «բացայայտում է» նորանոր մանրամասներով, ձգտում աւելի Մեծ Լրումին...: Անպարագիծ մի յայտնութիւն ասես նեղում է իրեն, թրթռում նոր-անպախարակելի լոյսի թրթիռներով, հոգու անդաւադիր ստոյգ «առարկայացումներով», որ արտայայտում է Բառ-նշանների, աւելի լայն՝ Խօսքի մասնատումներով...:

Բնագանցական-ճանաչողական-յայտնատեսական այս համակարգը փիլիսոփայական անփոխանցելի մակրո- եւ միկրո- շրջագծերն է ընդգրկում Կեանքի, որն անվախճան-վախճանականութեան «շփակուող շրջանում» տուայտութեան եւ յայտնատեսութեան բեւեռներ է կրում՝ տուեալ գոյա-ներկայ իր յարատեւող Ակնթարթի մէջ:

Ակնթարթն այդ Աստեղային արարման պահին մաքուր երգեր է պարզելում՝ առաջին սիրոյ, նախնականօրէն մաքուր առաջին համրոյրի, զգացումների ներսուզումների՝ մեղիին առընթեր («Մաքուր երգեր» եւ «Սիրոյ աւետարան» շարքերը), ոգէտարարում մօր-էի անխոռվ երթի յուսոյ Պատարագը («Պատարագ»), որոնք հոգու մեղեդիներ են՝ ասես հնչող առաջին անգամ...:

Ս. Յովհաննիսեանի պոեզիայում «նախակերպարը» յայտնում է «իր մէջ» (իր խօսքով՝ ստուերում), բայց նակատագրով կանխորոշուած առաքելութիւն ունի. ընթանալ դէպի էութիւնը՝ ճանաչել, իմաստաւորել իր մէջ եւ իրենից դուրս ապրող եւր, Կամփը, Աստծուն...: Ուստի, Յովհաննիսեանի ձգտող Անհատը ձգտելով դէպի իր անդունդը (միկրոշխարհը), պեղում է իր նախակերպելիւնը, վերադառնում՝ նրա գաղտնիքը յայտնաբերելով Եսի պարագծում, Մարդու մէջ...:

Արարչութեան այս անթափոյց պեղումը բանաստեղծին տանում է մեղքի ճանաչման ուղիով.

Ես ամաչում եմ նայել երկնքին,
ձնշում է հոգիս մի մեղք անքնին:-

Անդարձ հեռացայ մի օր ես Տնից,
Թէ ինչի՞ համար՝ անյայտ մնաց ինձ:

Ուշքի եկայ ես՝ մեռակ, Անդնդում՝
Կորցրած ճամփան, որ տանում է Տուն:

(«Ես ամաչում եմ նայել երկնքին»)

Հոգեւոր անպարագիծ տուայտութեան մէջ բանաստեղծի հերոսը իր էութեան խորքում յայտնուած Եսն է, ինքը, որ Մահուան ստոյգ ճամփով է անցել.

Մահն իմ ընկերն է արդէն շատ վաղուց.
Ես ու ինքը միշտ Խաղ էինք խաղում:

Մահը Ժամանակի մէջ ապաժստող միակ «գոյն է», որ հերքում է ամէն մի գաղտնիք՝ սէր, երագ, տանջանք, երջանկութիւն...: Մեղքերի այս անտրոհ տանջարանից, որ պարտադրում է կամփը (Շոպէնհաուեր) իր մարմնաւորման բազմաձեւութեամբ, ձգտելով յագուրդ տալ Եսին՝ ծնում է նաեւ տանջանքի սկիզբը, որից ազատագրում է միայն Մահուան իմացութեամբ...:

Կամֆի ինֆնարտայայտումը Եսի մարմնաւորումն է (նա կոչուած է «Տուն» վերադառնալու մեղսաբանութեան ճամփով), արթնացող ճիգն է գումարում իր մէջ, տիեզերական իր կարն կեանքի՝ «ինֆնահոլովման» անհունում գիտակցում, որ ինքը ելել է իր դէմ. Մարդու դէմ մաքառում է մարդը: Հոգեւոր այդ երկփեղկուածութեան անյարթահարելի զնդանում, այսինքն՝ Մարդու ներսում՝ «անձայն լալիս է Աստուած», որի վշտի ակունքը իր հոգեւոր վախճանն է, երազի անյուսալիութիւնը, մեղքի անիմացութիւնը, արարումի վեհ ու մաքուր, ազնիւ յղացման պակասը:

Գոյի տանջանքին աւելանում է եւ այն, որ Մարդը իր ներսում սպանել է իր նմանին, «Տուն» ճամփող մանկանը (նախաֆէնումէնը): Դրա պատճառով խաթարուել է մեծ աշխարհը, երազը, սիրոյ անկեղծութիւնը քնամարդու (կամ «քնական մարդու»՝ Ռուսոս) մէջ եւ որին ապաւինելն անիմաստ է: Մինչդեռ կայ մի ելք՝ Մարդու ինֆնյարթահարումը, ինֆնամաքագործման սնուցող «կենաց լոյսի» եւ տիեզերքի յաւերժ ինֆնագիտակցութեան եւ հոգեւոր ինֆնութեան ուղին, ուստի՝

Դեռ պիտի յարթեմ եւ Երազանքին,
Տիեզերքներ անցնեմ, որ հասնեմ կեանքին...

Կեանքը, Մահը, Տիեզերքը, Երազը, Կենաց լոյսը եւ այլ նախակերպար - ձեւեր Յովհաննիսեանի պոեզիայում արտաբնութ միայն քեռնաւորում են եզակի-նախախորհրդանշանի կերպով, սակայն իրականում տիեզերական կամֆի սնուցող ազդակներ են, որի իմաստը պարզաբանում է, աւելի ստոյգ՝ մեկնում, մարդու հոգեւոր կաղապարի, մարդու ներսում ընթացող ինֆնահայեցման, մարդու՝ ինֆնօրէն ներսից որոնելու անպարագիծ եզրում, որ իմացականի, նիրքականի եւ զգայականի սահմանները ոչ միայն «խախտում», այլ իրենց միասնական ուժով, միասնանալու գոյաւորման ուղիով զետեղում են մարդու մէջ, որոնում Կամֆի, տիեզերքի եւ մարդու գոյափոխաձեւութեան ներդաշնակութեան եզրը («մակրոաշխարհային գիտակցութիւն»): Այս կենսահոսքի տարածում «Ես ամաչում եմ նայել երկնքին» եւ «Կենաց լոյս» քանաստեղծական շարքերը լրացնում են միմեանց: Սրանց կերպարը ներշնչում է նոյն ակունքից, սրանց շղճիզ վիշտը ծնում է ասես տիեզերական անհամաչափութեան գիտակցումից, որից եւ ծնում է մարդու հոգեւոր դրամատիկզմը, ներքախման անհրաժեշտութիւնը, զգացումների շիկացած բոլնկումները: Սրանով այս երկու շարքերը (միւս շարքերը՝ նոյնպէս) «մերձենում են» ասես միասնական-միահունչ ֆնարական պոեմի ժանրին:

V

Իրագագողութիւնը ճանաչողութեան մի իրավիճակ է, որ հասկացութեան, ինֆնին իրի (Կանտ), կամֆ առ կեանք դրսեւորման համար ոչ միայն անհրաժեշտ պայման է՝ պատճառակիր եւ պատմական, այլ դէպի Այն անդրադարձուելու եւ նրանից մակարերուելու գիտակցութիւն:

Ինութեան միջոցով արտածուող ֆաղափակրթութիւնը, քանաստեղծը հակադրելով էութեանը, վերանդրադարձում է նրա իղեալական տիպը՝ իրրեւ «դարձի» էութիւն, Լոյսի եւ Ոգու համակցութիւն: «Աշխարհայեցաբային» այս տեսագծում, որ գրողը ոչ իղեալիստական է համարում, ոչ մատերիալիստական (ըստ Յովհաննիսեանի՝ սրանք գիտական համակարգեր են, «որոնք գուրկ են կեանքից, դրա համար էլ նշմարիտ չեն»¹), մետատէքստում «նմանօրինակում է»

¹ Ս. Յովհաննիսեան, «Գիտութիւն եւ նշմարութիւն», «Աստղիկ» հ. 4, 1991, էջ 221:

որոշ համադրամիասնութեամբ «ընտրութեանը» (բանաստեղծական պատկերը ռեալ եւ «երեւակայութեան» ընդթ ունի նախեւառաջ), հետագայում վերախմաստաւորում այն Շոպէնհաուսերի «կամֆի» տեսութեամբ (այսինքն՝ կամֆը եւ ընտրութիւնը նոյնացում են, ինչպէս մարմին-ընտրութիւն, կեանք-ընտրութիւն, հոգի եւ այլն):

Բնութեան (կեանքի) *իռացիոնալ* դրսևորումները երեւանում են անհատի կենսաբանական կազմակերպութեամբ, որի գործունէութեան արդիւնքում կեանքը մարմնով առարկայութեան է փոխարեւում բանաստեղծական տէքստում: Հետեւաբար, ինչը մարմին եւ կեանք չունի՝ վերացական է՝ ինչպէս Միտլ-գիտելիքը, նաեւ գուրկ է հաւատից, անհող բարոյախօսութիւն է, ինչպէս նաեւ զգայելի չէ, հետեւաբար կեղծ է...: Այստեղից եւ նա (բանաստեղծը) առաջընթացի եւ վերջաւորի նպատակը «կազմալուծում», անհատին վերագրում է ինքնահաստատման իր ինքնատիպ չափումները:

Ըստ *պէսիստների*, եթէ *ռէալութիւնը* (Յովհաննիսեանը գիտակցում է նախ եւ առաջ *էմպիրիկը*, որ հակադրում է ռէալիզմին արուեստում) չունի դրական արժէք, ուստի այն չար է, անդէմ, որ թագաւորում է մարդու կեցութեան բոլոր աստիճաններում, այսինքն՝ քաղաքակրթութեան վերափոխուող արժէք է (Շպէնգլերի արտայայտութեամբ):

Հաւատընծայելով իր չափումների մէջ վկայաբերուած ոչ թէ իրին (*էմպիրիկ-օբյեկտիւ*), այլ իր էութեանը, այն նեղում է ներսից՝ ընթանալով դէպի Նա...: Ողբերգագագացողութեան այդ ճանապարհը, սակայն, անցնում է ընդերկար նիւթի անբաւարար յագեցումի, խոռվմանի, սահմանային բախումների միջով, որ մարդու հոգեքնքը, իմացութիւնը միշտ ներկայացնում է խաթարուած, ճղճիւմ, տղմոտ, մեղքառատ, անբարոյ-հաւակնօտ, որից ազատագրումը լինելու է միայն հաւատի, իրական կեանքի յայտնատեսման, հոգու բաւարարութեան ընդունման միջոցով:

«Իմ կեանքը» բանաստեղծութիւնը այս առընչութեամբ ասես բնաբան է նրա «Խոռվմանի», «Սահմանային քալաղների», «Պոեմների» համար: Հետեւաբար նրա վերնագիրն անգամ վկայաբանական ենթատէքստ ունի.

Ճախրում էի ես դէպի Լոյսն անմեռ.
Թեւերին Հոգուս՝ Տիեզերքն անսահման.
Ընկաւ ինձ վրայ անյայտ մի Ստուեր...
Ճզմեց ինձ մի Ձեռք՝ թիթեռի նման:

Երբ բացուեց Քարը՝ կիսուած մէջտեղից.
Եւ եղաւ նորոգ Մնունդ Քարայրում,
Լուսեղէն Մանկան ափի մէջ անբիծ
Գտան լերդացած մի կաթիլ Արիւն:

Դրամատիկական այս «անցումներն» իսկ յագեցած են էպիկական մեծ փլուածմանով, իդեալի եւ նրա առկախման ողբերգական անկասութեամբ...:

Կամֆ առ կեանք սահմանը անհատը անցնում է շղթագումներով, «ընտրութեան իր մաշկի» մէջ պատեմաւորուած ջանքի անարդիւնաւէտ մղումներով: Միտլը, զգացումը, Սէրը, Երջանկութիւնը, Կարօտը, Մահն անգամ անգործ են հասցնելու Միակ-Մի է-ի սահմանին, որից ծագում է Կեանքի Լոյսը...:

Մարդու գործունէութեան այսպիսի «մօտիվները» վրդովիչ դրդապատճառներ են ընդամենը կամֆի մէջ, ինչպէս բազմակերպարան Պրոթէոս: Դրանք խարուսիկօրէն խոստանում են գոհացում, բայց երբ ի կատար են ածում, ապա նոյն պահին հանդէս են գալիս ուրիշ կերպարանով...: Միաժամանակ ծնում են բազմակերպարան «Խոռվման», որ բանաստեղծին մղում է մերժման.

Էլ բաւ է արդէն, ես շատ եմ լսել,
Ձոյլ պատասխաններ՝ իմաստուն, խորին.
Ձեզ լինի ձեր սուտ երազը լուսեղ,

Իսկ ինձ ձեռք է պէտք, որ մէջքս բռնի...

«Խոսվէ»

«Լոյս ու խաւար սակարկում են իրար հետ», մինչդեռ Մարդը բոլորել է իր հասակը 20-րդ (հարիւրամեակը), իբրեւ հիւլէն անապատի՝ անհատը իր դարաւոր օրերն անցեալ վերապրում կրկին, աստեղային մի ակնթարթում վերածում է երգի, բայց միայն՝

Մահն է Ստոյգ Միակ՝ ինձ կանչում է անվերջ նա.
Ինչ իմ Միտքն է ստեղծել՝ եղծուած է դեռ ի վերուստ.
Եւ երբ ցնդում է Հոգուց Խօսքի թօնը մանրամաղ՝
Խորխորտանե՛ր են բացում՝ անապա՛էն մի կորուստ...

(«Աստղային ակնթարթ»)

Մօտիվի ուժգնութեան խորքով եւ ճանաչողութեան հետ ունեցած յարաբերութեամբ էլ ի յայտ է գալիս անհատի *էմպիրիկ* քննադրութիւնը¹։

Անհատի կամքը նրան մղում է դէպի վայելքը, նրա ակնկալուող երջանկութիւնը։ Դա անյաղթահարելի կեանքի քննադէպ է, գոյաւորի տենչը առ կեանք, որը արտայայտում է մարդու մէջ բողոքելու օրհնութիւնը։ *Ինտելեկտը* հասու չէ կշռադատում միջոցով այն արժեքաւորելի։ Անհատի պարագայական այս «գործողութիւնը» մթազնում է սակայն, որի պատճառով էլ նա ձեւացնում է, խաղում, դիմակ կրում։ Իրականութիւնը փոխաձեւում է դիմակահանդէսի, մարդիկ դիմակաւորում են։

«Կեանքի բեմում, - ըստ Շոպենհաուերի, - մէկը արքայազն է խաղում, միւսը՝ մեծատոհմիկ, երրորդը՝ ծառայ...։ Սակայն այս զանազանութիւնը միմիայն արտաքին կարգի է. ներսում, իբրեւ այդ երեւոյթի հունդ, իւրաքանչիւրի մէջ ծուարած է միեւնոյն խեղկատակը՝ իր կարիքներով եւ տանջանքներով»²։ Մարդը արժեքաւորելով անարժեքը, սակայն դատապարտուած է ինքնանախաճողութեան ճանապարհով գոյաւորել իր ինքնութիւնը՝ տրորելով-մերժելով անգոյաւորի Ստուերը՝ մահուան եւ կատարեալի փոխաձեւութեան, հաւատի ներշնչումով առ Գոյը...։

Ս. Յովհաննիսեանը իր վաղ շրջանի մի քանի պոեմներում՝ «Մարդը», «Ստրուկը», «Բռնակալը», «Հերոսը», ինչպէս նաեւ մի քանի քալլադներում («Քամին», «Դարը»), դիմառնութեան եղանակով, պատկերային հակադրումի եւ ժխտումի քախումային փլուածքներով, անհատի էութիւնը մասնատում է իրար դէմ մահառող կեցութեան երկու ձեւերի։ Շոպենհաուերը կեանքի «կառուցակազմի» այդ երկու բեւեռները համարում է ծնունդը եւ մահը, որոնք հաւասարապէս պատկանում են կեանքին եւ հաւասարակշռում են միմեանց՝

«որպէս կեանքի ամբողջական դրսեւորման բեւեռներ»³։

Այսպէս, Սահմանային քալլադները սկսում են մի քննարկումով՝ «Սեր աշխարհիս սուր երկայրի» (Գ. Աղթամարցի)։ Ըստ էութեան, քանաստեղծը բացի կամքի ձգտումի գիտակցութիւնից, ներշնչում է նաեւ կեանքի այնպիսի բրբիռներով, որ միաժամանակ պայքար է մահուան դէմ («Իւրաքանչիւր ներշնչում մեզ պաշտպանում է վերահաս մահուանից» (Շոպենհաուեր)), քանզի նշմարտութեան նպատակը նաեւ գիտակցական հաճոյքն է, երանութիւնը՝ սոգորում ինքն իրենով, որի մէջ ապրում է բարին, գեղեցիկը։ Դէպի այն

¹ А. Шопенгауер. Мир как воля и представление, пер. А. Фета, С-Петербург, ст. 340.

² Թարգմանութիւնը մէքբրում է Ա. Ալեքսանեանի «Ջօհրայի կենսափիլիսոփայութիւնը» գրքից՝ Երևան, 1997, էջ 5-6։

³ Шопенгауер. Мир как воля и представление, т. I, М., 1900, ст. 283-284.

«պետք է ձգտել, վերացնելով, որպես չարիք, այն բոլորը, ինչ որ խանգարում է»:

Կեանքի պատրանքը բողոքածնու կամքի մղումը ինչպես Ս. Յովհաննիսյանի, այնպես էլ *պէսիմիստների* գիտակցութեան մէջ, անցնում է անհատի անգիտակից տենչի-ինքնագիտակցման-ինքնահրաժարման եռամիասնութեան միջով:

Սահմանային քաղաղներում բանաստեղծը պատրանքի զգացման առաջին փուլի՝ տառապանքներ վերապրող կոյր տենչի, նրա տարբեր փիլիսոփայան է, որի իրական (*էմպիրիկ սիւժէն*) հակադրում է հանոյքի-տառապանքի (նրա ինքնագիտակցման) գիտակցութեանը՝ տառապանքի ջանքը խղաղեցնելու, մեղմելու...:

Իրական աշխարհը, որ շղթայուած է Իֆուինի պտտուող անիվին (Շոպենհաուեր), դիմադարձ մաքառում է, որի հոգեզանցութիւնը չնչին է, Ոչնչով է պատած...: Զարմացքին խառնում է բանաստեղծի հիագարիուր *իրոնիան* (irony), ձողկումը...: Սուլելով անցնում է քամին («Քամին»), գրպանների մէջ ձեռքերը խրած՝ իրբե յաւերժի դեսպան, գտնում աղբակոյտի մէջ մի լաթ՝ Պատմութիւնը, ներս խուժում Կեանք, քանաչում քաղաքակրթութիւնը, մարդուն՝ կեղծ Քժնանքով շարուած, նրա Դաւերը չնչին, փողի անյագ տենչով ձեռք բերուող ինքնութիւնը (անհատի-ազգի)...: Խաբութիւնը, Քէնը նոյնպէս դերակատարներ են...:

Գոյի *էմպիրիկ* այս չափումները մարդու ողորդութեան սկիզբն է միայն, որ ըստ Շոպենհաուերի՝ կարող է մարդու միտքը յաղթահարել, եթէ, իհարկէ, նիշտ բացատրի կեանքի կոյր սկզբումը, բայց...:

«Հաւի հագարան» քաղաղում մարդիկ աճուրդի են հանել երգը, երագը, ձշմարտութիւնը-Աստուած: Կրկեսի խորքում (կեանքի քեմում) առուծախում են ամեն ինչ՝ Սէրը, փառքը, վշտերը (ձրի), յոյսը, արդարութիւնը, երագը: Ամենամեծ դերակատարը՝ Մահը, դատաւորն է ամենայնի այս կրկեսում: Մահը եւ շահը կուրացնում, մթագնում են դարը, ժամանակը, Հրաշքները բոլոր: Մահը՝ ծախելով մի ներկայ-գալիք-անցեալ, Շահը՝ վանդակներ, գերում են Հագարան Հաւին՝ քիրտ, անզգայ, մի թելը ջարդելով... ու լալիս է Կեանքը: Հաւը Հագարան՝ ձշմարտութիւն է ու երգ, վանդակում փակուած «գերի մի Աստուած», որի վանդակաճաղերը անտեսանելի են, քանի մարդու տենչը կոյր է, հաւատն անգոր...:

Մարդկային այդ տանջանքի հանդէպ անտարբեր է կամքը, կամքի աղբիւրը: Սէրը ինքնահայումի մի դրսեւորում է, որ նեղում է մարդու էութեան մէջ կարեկցանքի հատիկը: «Երգ երգոցում» սիրոյ առհաւատչեայ երկութիւնն ընկալում է երկու կերպով՝ Աստուծոյ եւ Նէ-ի, որոնք դրամայի դրսեւորման ներքին «սիւժէն են» պայմանաւորում: Աստուած տիեզերական յալտենականութեան կրողն է, որ տառապանքներ յագեցումից ընթանում է դէպի գոյի ձանձրոյթը, մինչդեռ երկրային Սէրը՝ Նէ-ն, տրուելով հիասքանչ մեղքին, կարօտին, մեղութեանը, ամայանում է ներսից՝ չհասնելով տառապանքի ազատագրմանը:

«Աստղային նոնքում» Մտքի ազատագրումը ինքն իրենից եւս դատապարտուած է.

Ես այդ երագին կին պիտի առնեմ,
Թէ ոչ... կը սպանեմ ես Արեգակին:

«Միտքը քաղաղում խորհրդանշում է նիւթի ծարարը, տիղմը կեանքի, որ ձշմարտութեան խոտոր քամիան է անգոյի...: Կապոյտի մէջ, գտնելով մի կղզի, անմահի իր ֆղամիդը հագած, խրոխտ երեւակայում է, թէ Երագը (Լոյսի

¹ Ա. Ի. Գերցել, Ընտիր փիլիսոփայական երկեր, հ. 1, Երեւան, 1949, էջ 242:

ծնունդ), Սերը, իր բարձրութեան աշտարակի ոտքերին կը փռուի...: Հասնելով վերջին, ինչպէս եւ միւս՝ «Հերոսը», «Բռնակալը» երկերում, Միտքն էլ պարտուած, անհիւփացած, հասնում է ինքնաժխտման՝ թողնելով յաւիտենականութեանը Աղմուկն այն քիրտ, որի դատաւորն անգամ Մահը չէ, այլ Անանունն աներկբայ, Միակը, անվախճանը...:

VI

Ժանրային իրացումների իմաստով եւս Ս. Յովհաննիսեանը ունի իր ինքնուրոյն ելակետը: Փիլիսոփայական իր ոգեւորումների համեմատ նա ընտրում է ճիշտ ուղին՝ ժանրի փոխածնութիւնը: Այս իմաստով բալլադի, շարքի եւ պոեմի ինքնութիւնը «սահմանազատում է» պայմանականօրէն: Հետեւաբար, հենց ժանրային այս սահմաններում է միայն, որ գրողը հասնում է «կենսական *ռէալիզմի*» արմատներին:

Ըստ հեղինակի, գաղափարականացումը արուեստի մահն է խորհրդանշանաբանութեամբ: Դրան հակադրելով կենսականօրէն ռէալ, կենսափորձով ընթացող բանաստեղծական ինքնութիւնը, «նուաճում է ասես կեանքի յաւերժութիւնը, կենսական ճշմարտութեան ուղին»: Այն Յովհաննիսեանի տողին հաղորդում է *աֆորիստիկ* (ասոյթային) բնոյթ, որ բանաստեղծական պատկերը ասացականից մինչեւ խոհականը գերյազգեցնում է իր իմաստի արուեստականութեամբ:

Բանաստեղծի համար կեանքի արուեստականութիւնը, խօսքի արիստոկրատիզմը կեանքի կուում մի յեմարան է, որ «մարդն ստեղծում է ինքն իր համար՝ ի միջոցառութիւն իր գոյութեան տիեզերական մեակութեան»¹:

Գոյութեան այդ «հարթութեան» մէջ արուեստագետն այն անհատականութիւն կրողն է, սակայն, որ ունի առանձնայատուկ *պոտէնցիա* (ներուծ) համաշխարհային կամքի մէջ (կամքի անհատականացումը իւրայատուկ է միայն «մտահասու քննադատութիւնների բազմաֆանկտիւնութեան մէջ») (Շոպէնհաուեր):

Բնութեան եւ մարդու անհեղբի մի այսպիսի միասնութեամբ բանաստեղծութիւնը բանաստեղծից «օտարուող» ձայն է յաւերժութեան մէջ, որ Ս. Յովհաննիսեանի կարծիքով, տարածում է իրրեւ գոյութեան մի մաքուր հնչիւն: Դրա ենթահիմքը (գրում է բանաստեղծը դեռեւս անտիպ մի նամակում) կազմում է հետեւեալ գիտակցութիւնը. ես առաջին եւ միակ անգամ եմ այստեղ, եւ անպայման մինչեւ վերջ պետք է իմանամ, թէ ես այս ուր ընկայ եւ ինչու. դրա համար պետք է ես հնարաւոր անխաթարութեամբ արտացոլեմ այն Լոյսը, որ տրուած է ինձ...:

Բանաստեղծը Լոյսը պետք է ճանաչի՝ ընթանալով դէպի նրա խորքը: Հաւանաբար, այս դէպքում նրա եւր, իր վրայ կրելով մարդկային աշխարհի բոլոր չարիքները, ինքնամաքման ճանապարհով, իրրեւ մի նոր Արարիչ՝ կրկնաբարում է գոյի աշխարհը:

Բնագանցական իմացութեան կարգում, այս դէպքում, հոգեբանական *կատեգորիայի* (մտակարգի) իմաստ է կրում կարեկցանքը, որը, սակայն, բանաստեղծի միակ խարիսխը չէ, այլ Հաւատի սկիզբը:

Շոպէնհաուերի համակարգում չարը, *էգորիզմը* (եսապաշտութիւնը), կարեկցանքը հետեւութիւններ են, որոնք թխում են կամքի ցանկութիւնից, անկատար իրացումից եւ ազատագրութեան բաւարարուածութիւնից: Մրանցից երրորդն է միայն, որ մարդու գործունէութեան, վարքի բարոյական հիմնասիւնն է դառնում:

Աւելին, կարեկցանքի «գործողութիւնը» եսին հնարաւորութիւն է ընձե-

¹ Ս. Յովհաննիսեան, «Գիտութիւն եւ ճշմարտութիւն», «Աստղիկ» հ. 4, 1991, էջ 231-232:

ռում հաւատի միջոցով հասնել աշխարհի եւ մարդու միասնութեանը, բոլորի նոյնութեան գիտակցութեանը:

Հաւատի գործողութիւնը Ս. Յովհաննիսեանի «Մարդը», «Հառաչանք» եւ «Հոգին» պոեմներում (առաջինը գրուել է շատ աւելի վաղ) անհատի ոգորումների մի այնպիսի կեցութեան ընկալման փոխանութիւն է, որ եռամիասնութեան մէջ անտրոհելի է, բայց կրում է «էվոլուցիայի» (evolution) բնոյթ Յովհաննիսեանի համակարգում:

Ըստ էութեան, մարդու տանջանքները, դժբախտութիւնները բեռնելով անհատի մէջ, Մարդ-ակնթարքը հասնում է իր գոյի տեսիլայայտութեանը: Ուստի եւր նոյնանում է եսին «Յառաչանքում» եւ «Հոգին» պոեմում, հաւատի միջոցով ազատագրում իր գոյութեան թոյնից, դիւական ցանկատիրութիւնից, էգոիզմից ու չարութիւնից...:

Յովհաննիսեանի կերպարը այս դէպքում ոչ մարգար է, ոչ Յիսուս, որ կատարելութեան միջահանդերձներ է կրում մարդու գիտակցութեան մէջ: Ընդհակառակը՝ Աստուծոյ եւ Հոգու նոյնութեան փիլիսոփան է բանաստեղծը, իսկ Յիսուսը՝ մարդու որդի, մարդու հանդերձ է կրում, ուտում է եւ խմում մարդու պէս, բարեկամ է մաքսաւորների եւ մեղաւորների: Նրանում անհատը (բանաստեղծը) «տեսնում է ինքն իրեն», «անաչելով՝ դառնում եղբայր», բայց՝

Մարմինդ եղաւ Քո Մեղքը միակ.

Իմ միակ Մեղքը՝ եղաւ իմ հոգին...

Դիմառնութեան այս խոհում աստուածաշնչեան Յովհաննէսը եւ Յիսուսը նոյն հակադրամիասնութիւններն են, որ մարդու այսաշխարհային ցաւերն են կրել, ինչպէս բանաստեղծը...: Յաւիտեանութեան օրինաչափութիւնն ինքն է լոկ՝ Աստուած, որ նաեւ կեանքի յաւիտեննութիւնն է, սակայն՝

Որոնեցի ես Աստուծոն ամէնուր.

Գտայ Երգի մէջ՝ Տիեզերքից անդին:

(«Աստուած»)

Աստուած-Կեանքը-Հոգին Յովհաննիսեանի պոեզիայի համակարգում նոյնանում են, ինչպէս ակնթարք, որ ներկայ է, գալիք, անցեալ: Արիստոկրատիկ մի վեհութեամբ յառնում է Աստուած՝ «Երկիրը՝ իրրեւ կոպին կախում մի արցունք», Որոնողի չարանեղ մոլուցքին անտարբեր: Ապրում է նա իր հեռու «ձանձրոյթի» մէջ եւ որի լոյսի հանդէպ մեր աչքի լոյսը կոյր է, խաւար, եղծ: Եթեքանման այդ անհուն Ոգին Կեանքն է յաւերժ, անսահմանութիւնը («Հոգին»)...

Մենք նրա գոյի մասնիկներն ենք, պտուղը, որի Լոութեան մէջ ենք լինելու եւ ծննդից առաջ, եւ մահից յետոյ: Ինքը ժամանակ է եւ տարածութիւն, բայց դուրս է ժամանակի ու տարածութեան սահմաններից: Իր Լոյսի սահմանում կեանք է «ամէն ապրած», բայց ինքը, իրրեւ Կեանք՝ Երազ է անխաբար, աննուաճ...

Եւ այդ Երազում ոչինչ չի լինում.

Ոչ Մահ, ոչ Մնունդ, ոչ Երթ, ոչ Վախճան,

Միայն աններկայ մի յիշողութիւն

Անշոյ՝ լուում է ստուերի նման...

Ինքը լուութիւն է յաւիտեանապէս, որի մէջ աշխարհ ենք գալիս մենք՝ Մանկութեան շապիկով ըզմանքի, հագնում մարմին՝ իրրեւ «կորդ Երկիր», բանականութեան ցաւերը կրում եւ, բոլորելով «շրջաններ անթիւ», տենչում վերադարձն այնտեղ, ուր ինքը չկայ...:

Նա է, որ արարում է Մահը, Կոիւր: Սկիզբն ու վերջը իր մէջ են, ինքը՝
յաւիտեանական... Ինքն է իր արարիչը, հաւատի ընծան, հաւատը անխոնջ:
Հոգին, որ հոգուց է ծնում, հաւատ է Մի-ի, որին՝

... տեսաւ Հոգին է-ի անպարագիծ՝

Իր մէջ, իրենից, իրենով հաստուած.

Արթնացած ասես մի կոյր Երագից՝

Ճանաչեց նրան անստգիւտ աստուած...

Իդէական այդ կենսոլորտում Կեանքը անանց Աղօթքի է փոխում,
թողութիւն շնորհում աշխարհի, մարդու մեղքերին, բոլորում մի շրջան
յաւիտեանութեան, ուր ձգտում է քանաստեղծի հոգին.

- Աստուած իմ, շուտով ես Գեղ մօտ կը գամ՝

Պարզած թեւերս՝ որպէս Աղանի.

Կը պատմեմ ես քեզ զարմանքով մանկան,

Թէ ի՞նչ տեսայ ես՝ Մարդս երբեմնի.

Ինչե՛ր պարեցի Երկրում հեռաւոր՝

Տարակերպ Մարմին ու Հոգի հագած.

Կը լսես դու ինձ ժպիտով անդորր.

Նայելով իրար՝ կը լռենք յանկարծ:

... Ուրեմն, գոյաւորի աշխարհն սկսում է իրենից: Իր Հայեացքը միշտ իր
խորքում է, իր Լուսեան մէջ, որ հաւատի *ինտուիտի* ներշնչանքով է
գիտակցում...:

Կամքը լրման է հասնում ըզձանքի, տենչի ազատագրումով. Ամբողջը
ձգտում է նրան՝ իբրեւ գոյի խարխիս, քանզի Ինքը Հոգու աննուան հիւլէն է
Մի, որից անդին Չանձրոյթն է՝ անվախեան, ստոյգ, այսինքն՝ Մի Այլ Մի
Երբորդ Աշխարհ...:

Սեւակ Յովհաննիսեանը դարավերջի հայ պոեզիայում իր «կենսատարածքն
է» ստեղծում՝ վերագրելով արուեստին յատկանիշներ, որոնք առնչում են նաեւ
իր պոեզիային: «Բանն այն է...,- նշում է քանաստեղծը,- որ մի մարդու
կենսական ընկալումը միաժամանակ ամբողջ մարդկութեան կենսական ընկալումն
է»: Հետեւաբար, կեանքի եւ մահուան միջեւ ընկած կենսատարածքը մի մա-
հաւան քանապարհ է՝ իբրեւ Կեանք՝ լինելութեան իր փոխածելութիւններով՝:

Արուեստի ինդիքը Մահուան քանաչումն է, մարդու՝ մի «երկրորդ
կեանքի ստեղծումը» յաւերժութեան մէջ, որ մակարեւում է անգոյի սարսափից:
Որքան մեծ է մահուան տագնապը, այնքան խորն է «ներքին ճգնաժամը»
դրամատիկորէն վերապրելու կեցութիւնը արուեստի միջոցով...: Ուստի
քանաստեղծը, փորձելով վերստեղծել այն իր «Երկինք եւ Երկիր» հատորում,
վերարտադրելով իր էութիւնը՝ իբրեւ գոյի անխաթար կերպիւնեութիւն, իբրեւ
Իր տեսակ, հաւատընկալման քանաստեղծական ներշնչանքով ձուլում է
մարդկային քաղմութեան մի լեզուի՝ հայ լեզուին, որ պատմութեան
անդրանցականութեամբ վերստեղծում է իրեն եւ քանաստեղծի աշխարհը...:

ՍՈՒՐԷՆ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

¹ Ս. Յովհաննիսեան, «Աստղիկ», հ. 4, 1991թ., էջ 228-230: